

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1950 ՄԱՅԻՍ - ՅՈՒՆԻՍ ԹԻՒ 1-2

SOMMAIRE

1950 Janvier - Février N. 1-2

	Էջ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ	
ԽՄԲ. - Յորեկինական տարին	1
ԳՐԱԿԱՆ	
Հ. ՄԵՍՐՈՊ ԶԱՆԱՇԵԱՆ. - Սրբուհի Տիւաթ (վերջ)	3
ՕՆՆԻԿ ԱՅՎԱԶԻԱՆՏ. - Գեղոն Հայ Լեզուին	10
ԱՐՍԷՆ ԵՐԿԱԹ. - Խոստում	19
Հ. ՆԵՐՍԷՍ ՏԵՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆ. - Աւտոյ Մանուշ ցիոյ (ծննդեան 500-ամեակին առթիւ)	20
Հ. ՄԵՍՐՈՊ ԶԱՆԱՇԵԱՆ. - Միւթար և Հայ ազգը (պատասխան առ «Սիոն»)	23
ՈՍՏԱՆԻԿ. - Գիտեմ	41
ԿՐՕՆԱԿԱՆ	
Հ. ՆԵՐՍԷՍ ՏԵՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆ. - Անդենական կեանքի հարցեր Հայ եկեղեցւոյ վարդապետութեան թեմէն (շար.)	11
ՊԱՏՄԱԿԱՆ	
Հ. ՍԱՀԱԿ ՏԵՐ-ՄՈՎՍԵՍԵԱՆ. - Սելճուքեան թուր- քերու արշաւանքը (շար.)	14
ՀԱՅԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆԳ	
Հ. Մ. Ժ. - Միւթար Աբրահամ մահուան 200-ա- մեայ Յորեկինական առթիւ սարգուած հանդէսեր 1949 տարւոյն ընթացքին	42
ԳՐԱԽՕՍԱԿԱՆ	
Հ. Մ. Ժ. - Լութի Մինաս «Արպիան» 1947, Պարիս	47
Հ. Մ. Ժ. - Գաւրիլ Գարամանեան «Հայրենի տե- սիւքներ» 1946, Պուէնոս Այրէս	48

	PAGE
ARTICLE DE FOND	
Réd. - L'année Jubilaire	1
LITTÉRATURE	
P. Mesrob Djanachian. - Serpouhi Dussap (fin)	3
Onnik Ayvaziantz. - Ode à la langue armé- nienne	10
Arsène Yergath. - Promesse	19
P. Nersès Der-Nersessian. - Aldo Manuzio (à l'occasion de 500-ième anniversaire de sa naissance)	20
P. Mesrop Djanachian. - Mékhitar et la na- tion arménienne (réponse à « Sion »)	23
Ostanik. - Je sais	41
RELIGION	
P. Nersès Der-Nersessian. - Questions de la vie future dans la Doctrine de l'Eglise Arménienne (suite)	11
HISTOIRE	
P. Sahak Der-Movsessian. - L'invasion des turcs seldjoucides (suite)	14
ECHO ARMÉNIEN	
P. M. Dj. - Solennités jubilaires du Bi-Cen- tenaire de la mort de l'Abbé Mékhi- tar au cours de l'année 1949	42
RECENSION	
P. M. Dj. - Loutfi Minas « Arpiagan » éd. 1847. Boston	47
P. M. Dj. - David Karamanian « Visions patriotiques » éd. 1946, Buenos-Aires	48

ԲԱԶՄԱՎԷՊ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ - ԲԱՐՈՅԱԿԱՆ

1843 - 1950
108-ԲԻ ՏԱՐԻ



ՅՈՒՆԻՍԱՐ-ՓԵՏՐՈՒԱՐ
ԹԻՒ 1-2

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՅՈՒՆԻՍԱԿԱՆ ՏԱՐԻՆ

Այս քառասունհինգ 1950 տարին՝ Յորեկինական Մուրր Տարի հռչակումս քրիստոնեական տիեզերական գահակալին։

Ուխտաւորներու հոգի քաղմութիւններ խոշորեալ պիտի վազեն Յաւիտենական Քաղաքը, ինչպէս բոլորեալ նախնեանց տարի ողբալ, շնորհքի աղբիւրին իրենց սափորը լեցնելու։

Երկրորդական այս արտասովոր շարժումը չքնաղ ապացոյցն է քրիստոնեական ջերմեանդին հոգիի, որ կը բարախէ կոշտքին տակ չորսնաբիւր միջին քրիստոնեաներու, որոնց հաւատքը իրենց պարծանքն է, որոնց միտքիւնը Կարողիկէ Եկեղեցւոյ Հոգւոյն պատիւին աչիւն տակ՝ ապացոյցն է քրիստոնաւանդ ձեւարարութիւններու փարոսին, որ միանգամայն կը կազմէ իրենց հոգեւոր անճնչելի երջանկութիւնը։

հետ զոգրերաց՝ մեր ազգակիցները ունին իրենց առջեւ նաեւ Մեծն Միսրարի մահուան երկուհարիւրամեայ Յորեկանին տոնախմբութեան գեղեցիկ առիթը, անգամ մ'ալ հայեացքին դարձնելու դէպքի վեկտիկ և Ս. Դաւար։

1949-ի Ապրիլին բացուած Միսրար-Յորեկինական տարին, Սեպտեմբերի գեղածիտ օրերուն պիտի փակուի շքեղ հանդէսով մը, որուն ի հարկէ պիտի մասնակցի աշխարհիս չորս ճագերուն ցրուած հայութեան ատուար ներկայացուցիչ մը։ Այդ նշանակալից օրուն հրաշիրուն է այժմէն մէկ մի հայ, որ պատեհութիւնն ու դիտարկելու ունի կորելու մօտաւոր կամ հեռաւոր ցամաքատեղիներ ու ովկիանոսներ։

Անցնող տարւոյն ընթացքին ստուգիւ խանդավառ էր ցոյցը՝ կառարուած հայ Ազգէն և Հայ Մամուլէն

ԲԱԶՄԱՎԷՊ

դէպի Մխիթարի յիշատակը: Մխիթար երկու հարիւր տարի վերջն ալ կ'ապրի իր գործին մէջ, և իր արդիւնաբերած ազգօգուտ շարժումով: Ոչրախ եւր յայտարարելու որ Հայ Մամուլը գիտակցօրէն վեր հանեց Մխիթարի կատարած դերը հայ ժողովուրդի վերագարծումի հսկայ ձեռնարկին մէջ: Հսկայ էր արդարեւ այդ ձեռնարկը, և լուսաւոր՝ այն հանձարեղ ծրագիրը, զոր ան գծեց ժ. դարու սեմին վրայ, արատես հայեացքովը դիտելով ապագան: Հայ Մամուլը շեշտելով Մխիթարի և Մխիթարեաններու այդ ազգանշն գործը, կատարեց անշուշտ իր պարտքը, և ինչպէս ըսինք, շատերն աննկմէ անցնելու անշուշտ երկար էջեր և բացառիկ բիշեր: Աշխարհը կը համարինք բռնել այն բոլոր օրաքերերը որ իջան ապարեզ, երբ կը հաշտուենք թէ անխտիր Մխիթարի գրեթէ բոլոր քերքերը և օրագրերը մրցեցան իրարուն հետ արձագանգ տալու մեծ եղբայրներուն: Սակայն աննկմէ անցնելու անցնելու չեն անկնք՝ որ բացառիկ կարեւորութիւն տալով՝ անշուշտ անշուշտ բիշեր ոչ լայնօրէն անտաշայտուեցան ցարդ. այսպէս Ալիք (Թեհրան), Արեւ (Գահիրէ), Աւետիք (Պէյրութ), Բանբեր (Շրոնք-կարտ), Ժամանակ (Պոլիս), Հայրենիք (Պոսթոն), Ճառագայթ (Պոլիս), Մասիս (Պէյրութ), Մարմարա (Պոլիս), Յուսարեւ (Գահիրէ), Պայքար (Պոսթոն), Սան (Պոլիս):

Իշխարանքի բերքի նկարագրին և ուղղութեան համաձայն էր անտես նկարագիրը և տրուած շեշտը՝ այդ գնահատական արտայայտութիւններուն: Կրօնականները վեր հանեցին ձգրոտրէն Մխիթարի ոգին, շեշտեցին իր մէջ Աստուծոյ մարդը, կրօնաւորը,

աւորը, Նախնեաց հոգւով վառուած կրօնի առաքեալը՝ նախ քան իր մէջ տեսնելը հայկական գրականութեան վերածնունդի հիմնադիրը: Աշխարհիկները շեշտեցին ընդհանրական իր մէջ գիտունը, գրի մարդը, հայ ազգին մշակութային կեանքին վերածնունդը: Երկու տեսակետներն ալ ուղիղ՝ որովհետեւ ձեռնին ամբողջացնելու Մեծն Մխիթարի դիմագիծը, նկատելով զայն իր ազգին հարագատ գաւազնը և Ազգը՝ երախտաւորեալն այդ մեծ Հայուն:

«Ազգ մը, որ երեսուն քերած է Մխիթարի նման մէկը, այդ ազգը չի մեռնիր» ըսած է Վսեմ. Կարդինարը՝ Գրիգոր Աղաձաւեան, Հոգեւոր Պետր Հայ Կարօղիկէ Համայնքին՝ Մայիս 1-ին Պէյրութին մէջ տրուած հանդիսի մը առթիւ. որովհետեւ ան իսկական մահէն փրկած է իր ժողովուրդը, մտքի և հոգիի կենսունակութեան դէմ դաշտաւորող սպառնալիքէն, որ անաւորագոյն է քան միշտ մահը՝ որ կը քայքայէ մեր նիւթական կազմը: Ազգ մը կը մեռնի այն ժամանակ՝ երբ տէր չէ իր լեզուին, իր անցեալին, իր արտաբերութեան, իր գրականութեան: Մխիթար վերանորոգեց անցեալը, Ոսկեդարը՝ իրքեզ գրական շարժում մեզի վերադարձոց, վերանորոգեց մանաւանդ Լուսաւորչի լոյս հաշտութիւն բախանդակ գեղեցկութիւնը և ջերմութիւնը՝ Ընդհանրական Եկեղեցւոյ հետ բիշեր՝ Ընդհանրական Եկեղեցւոյ հետ համերաշխութեան և ներդաշնակութեան ուղիով, որ ձգնարիտ ուղիին էր մեր լուսաւոր Նախնիքներու տիեզերածառ մտքին:

Անմահ արդարեւ իր յիշատակը և իր գործը՝ որուն առջեւ երկիւղածօրէն կը խոնարհի բովանդակ Հայ Ազգը:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԻՐՈՒՀԻ ՏԻՒԱՐ

(1842-1901)

(Շար. Բագմ., 1949, թիւ 5-6, էջ 102)

ՄԱՅՏԱՅԻ ԳԱՂԱՓԱՐԱԹՈՍԱԿԱՆ ԹԵՐՈՒԹԻՒՆԵՐԸ. - ՍԻՐԱՆՈՅՇ ԵՒ ԱՐԱՔԱՆԻՍՏԱՆԻՑՈՒՆԸ, ԳՐԱԳԵՏԸ ԵՒ ԸՆԿԵՐԱԲԱՆԸ ՍԻՐՈՒՀԻ ՏԻՒԱՐԻ ՄԷՋ:

Մայտա Տիւարին առաջին փորձն է: Հոն նէ գաղափարախօսական յայտնի ճիշդեր կը կատարէ, տալով իր գործին վարդապետական հանգամանք մը, վնասելով վիպական կազմին, առանց սակայն բուրովին գայն ոչնչացնելու: Յայտնի են հոն վիպական և փիլիսոփայական գոյգ ուղղութիւնները, կամ աւելի ճիշտ մտաւորութիւններ, որոնք առանց իրարու հետ խորապէս լծորդուելու առաջ կ'երթան վէպի ընթացքին: Այս կէտը առաջին անգամ անդրադարձաւ Ռ. Յ. Պէլլէրեան. «Ըստ իս (կ'ըսէ ան), այս վէպն երկու տարբեր մասեր կը պարունակէ, մին վիպական, և միւսն իմաստասիրական, որը նման երկու գետերու՝ գուզնթաց, բայց առանց իրար խառնուելու կ'երթան, կը շարունակուին գործին բովանդակ ընթացքին մէջ իրարմէ գառ ու մեկին: Կրնայ ըլլալ որ մին միւսին առթիւ գրուած լինի, բայց չեն գրուած իրեւ միմեանց հաստատութիւն կամ մեկնութիւն. վասնզի յայտնապէս կը տեսնուի թէ Տիւին Սիւրայի փիլիսոփայական խորհրդածութիւններն մեծ կապ ու յարաբերութիւն չունին վէպին դէպքերուն հետ ու իբր անկցօրդ ու անձաճ գրուածներ կու գան ընդհանուր վիպասանութեան թիւն»¹²:

(12) Երկրագունդ, 1883. Թ. 11, էջ 338.

Մենք վերը ըսինք արդէն՝ թէ Մայտայի Սիւրա-ն, ինքնին Տիւարն է, կամ անոր բերանը՝ որ կը խօսի, կը վարդապետէ, իր տեսակէտները ընդլայնել կը ջանայ, հոգ չէ թէ ատենք բոլորը չեն հիւսուիլ կամ չեն շարունակ վէպին մէջ: Ասիկա առաջին նկատելիք կէտն է Մայտային, որ իբր Roman à thèse անխուսափելիօրէն պիտի լինար այս թերութեան մէջ:

Տիւար նպատակ ունի պայքարելու նախապաշարունակութեամբ. բայց որոնք են այդ նախապաշարունակները՝ որ կ'ենք կը կաշկանդեն: Տիւար ինքնին տարտամ է և անկարող գտնելու բուն նախապաշարունակները, որ թոյլ չեն տար կնոջ՝ ազաւորութեանը, որ թոյլ չեն տար կնոջ՝ ազաւորութեանը, մարդկային օրէնքները, կրօնքը, պատիւը, բարոյականութիւնը և երկուքը՝ ընդգծելու այդ մարդու իշխանութեան դէմ՝ յաճախ կը շեշտուին վէպի ընթացքին՝ որպէս արգելքներ կնոջ համար, հաւասարելու այդ մարդու: Պաշտպանելով հանդերձ ընտանեկան մարքութիւնը և հաստատութեան ամենակենսական հարցը, Տիւար կը թուի անուղղակի վրդովել կնոսրու հոգւոյն խաղաղութիւնը, տալով անկարող անբարոյ և ապականեալ կիններու, որոնք ըստ երեւոյթին կը վայելեն «կարծուած ազատութիւնը»¹³. Հերիզու անսանձելի անկարգութեան օրինակ մը Մայտայի մէջ, Ժամեք մը Սիւրանոյշի մէջ, Տիւին Արգարեան մը Արաքսիայի մէջ կը ներկայացուին որպէս նախապաշարունակ հակադրուած են Մայտա, Սիւրանոյշ և Արաքսիա՝ իրեւ նահատակներ ընկե-

5442-Ա.Է.



406-71